ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

<< ՀՀՏՄ-ԳՀԱՊՁԲ-2024/03>> **ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ**

ք. Իջևան << 13 >> օգոստոսի 2024թ.

Ժամը 14:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ՝ Աղաբեկ Գալստյան

Հանձնաժողովի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ՝

Հանձնաժողովի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ՝ Թինա Օթարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Աննա Մանգասարյան

ՀՀՏՄ-ԳՀԱՊՁԲ-2024/03 ծածկագրով <<Մանկապարտեզների կարիքների համար դաշնամուրների և օդափոխման համակարգերի>> ձեռքբերման մրցույթի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) հայտերը բացվել են էլեկտրոնային արմեպս համակարգով ս.թ. օգոստոսի 7-ին ժամը 11:00-ին:

1. Տվյալներ մրցույթի մասնակիցների վերաբերյալ.

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	ՀՎՀՀ, էլ. հասցե	Չափաբաժնի համարը
1	Կապիտալ գրուպ ՍՊԸ	05549561, kapital.group.construction@gmail.com	1, 2

2. Տվյալներ մասնակիցների կողմից հրավերով պահանջվող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ.
   1. Մասնակցի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1 (Առաջարկվող ապրանքի նկարագիր) -ում 1-ին և 2-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերով նշված չափանիշները շեղված են Հրավերի պահանջներից: Մասնավորապես 1-ին չափաբաժնի համար՝ բազմաձայնության, ռիթմերի, դեմոյի, ելքային հզորության չափերը, իսկ էկրանի չափերն առհասարակ նշված չեն: Էկրանի որակը տարբերվում է պահանջվող որակից, ինչպես նաև մասնակցի կողմից ներկայացվող Հավելված 1.1-ում պետք է լրացվեն նաև տեխնիկական բնութագրի տեքստային բնութագրիչները:

2. 2-րդ չափաբաժնի մասով օդափոխման սարքավորման արտադրողականությունը Հրավերով պահանջված է 691խմ/ժամ, իսկ մասնակիցը ներկայացրել է 1300խմ/ժամ: Միացման հզորության ցուցանիշը ևս ցածր է:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ ՀՀՏՄ-ԳՀԱՊՁԲ-2024/03 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, վերոնշյալ անճշտությունների շտկման համար:
2. Մասնակիցը, եթե մեկ աշխատանքային օրում չշտկի անհամապատասխանությունները նրա հայտը ենթակա է մերժման:
3. Ծանուցումը ուղարկել մասնակցին հայտով նշված էլեկտրոնային հասցեին և արմեպս ծրագրով:

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա շտկված փաստաթղթերի գնահատումից հետո:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գալստյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հասմիկ Խաչատուրյան

Թ. Օթարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան